



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, առավոտ-
յան ժամերգութեան վերջավորութեան, վե-
հափառ Հայրապետը Մայր Տաճարում կա-
տարեց Ավագ Ս. Սեղանի Աստվածամոր
նորակերտ նկարի օծումը:

Մայր Մաշտոցում կա մասնավոր «Կանոն
օրհնելոյ զպատկեր Սուրբ Աստուածածնին»,
ըստ որի «բերեն զպատկերն յեկեղեցին
առաջի բնին և լուանան նախ ջրով և
ապա գինեաւ», սաղմոսների, շարական-
ների, համապատասխան քարոզների և
աղոթքների ընթերցմամբ: Ապա կատար-
վում է նորակերտ նկարի օծումը, «Օրհնե-
ցի, օճցի և սրբեսցի պատկերս ամենօրհնեալ
Ս. Աստուածածնի», որից հետո միայն,
հրահանգում է Մայր Մաշտոցը, «ղնեն
զպատկերն ի բաղմոցի՝ առաջի Սրբոյ
Սեղանոյն»: Այնուհետև երգվում են Ս.
Աստվածածնին նվիրված ընտիր շարական-
ներ՝ ըստ պատշաճի նկարագրութեան պատ-
կերին և խունկ ծխեն և երկրպագեն»:

Աստվածամոր նկարի հեղինակն է իտա-
լահայ ծանոթ արվեստագետ նկարիչ Գրի-
գոր Շիլլեյանը: Արվեստագետը իր նոր
ստեղծագործությունը անվանել է «Հայաս-
տանի Տիրամայր»:

Նկարը, օժիւելուց հետո, զետեղվեց Մայր
Տաճարի նորակերտ մարմարյա Ավագ Ս.
Սեղանի վրա՝ իր մասնավոր տեղը:

Վեհափառ Հայրապետը այս առթիւ հո-
գեկան խորունկ գոհունակութեամբ օրհնելով
նկարիչ Գրիգոր Շիլլեյանին և նրա նոր
ստեղծագործությունը, ապրիլ 20 թվակիր
տրված օրհնութեան Իր կոնդակում գրում էր,
որ Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա
դրված Աստվածամոր նոր նկարը «Մենք
կնկատենք Ձեր սրտի պարգևը՝ մատուցված
աստվածակառույց Ս. էջմիածնին և հայ
հավատացյալ ժողովուրդին»:

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Կրկնազատիկ և
«յիշատակ բիրաւոր նահատակացն մերոց
համաշխարհային առաջին և երկրորդ պա-
տերազմաց»: Մայր Տաճարում սուրբ պա-
տարագ մատուցեց հոգեշնորհ Ս. Եղիշե
վարդապետ Սարգսյանը և քարոզեց՝ ոգե-
կոչելով Ապրիլյան եղեռնի և համաշխար-
հային երկրորդ պատերազմի նահատակնե-
րի խնկելի հիշատակը:

Հավարտ սուրբ պատարագի, վեհափառ
Հայրապետի հանդիսադրութեամբ կատար-
վեց հոգեհանգիստ:

ՄԱՅԻՍԻ 1-ԻՆ, ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ
ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատա-
րագեց արժանապատիւ Ս. Մկրտիչ քահա-
նա Մկրտչյանը:

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ
Հայրապետը:

ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ, ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ, Մայր
Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և
քարոզեց հոգեշնորհ Ս. Հուսիկ վարդապետ
Սանթուրյանը, ծանրանալով Քրիստոսի
հարութեան մեծ խորհրդի բարոյական նշա-
նակութեան վրա:

Սուրբ պատարագին ներկա էր վեհափառ
Հայրապետը:

ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր ճեմա-
րանի դասախոսական կազմը և ուսանո-
ղությունը, վերատեսուչ գերաշնորհ Ս. Հայ-
կազուն եպիսկոպոս Աբրահամյանի գլխա-
վորութեամբ, էքսկուրսիա կատարեցին դե-

պի Բյուրական և Արագածի լանջերին գրտնըվող այլ գյուղեր: էքսկուրսանտները այցելեցին պատմական Ամբերդը և եկեղեցին: Ամբերդը կալվածն է եղել Վաչուտյան իշխանների: Բերդը և եկեղեցին կառուցվել են Ժ դարում:

Ճեմարանականները երեկոյան Մայր Աթոռ վերադարձան լավագույն տպավորություններով:

ՄԱՅԻՍԻ 15-ին, ԿԻՐԱԿԻ, «տօն երեման Ս. Խաչի»: Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը:

Պատարագիչ սրբազանը քարոզեց «Եւ պա երեւեցի նշան Որդույ մարդոյ յերկինս» բնաբանով, պատմականը տվեց Երեման

խաչի դեպքին, ծանրանալով Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետի Կոստանդ կայսեր գրած Թղթի պատմական տվյալների վրա:

Սուրբ պատարագին ներկա էին Սիրիայից և Լիբանանից ժամանած ուխտավորները, որոնք հավարտ սուրբ պատարագի հաղորդվեցին:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՄԱՅԻՍԻ 20-ին, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանում վերջացան 1959—1960 ուսումնական տարվա դասավանդությունները:

Ճեմարանի ուսանողությունը մինչև մայիսի 31-ը կպատրաստվի ամավերջի քննություններին, իսկ հունիսի 1-ից կսկսվեն բանավոր և գրավոր քննությունները:

